«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Խոսքային հաղորդակցում

Առարկան՝ Ռուսաց լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Հոբոսյան

Ուսումնական հաստատություն՝ Նեղոցի Արթուր Բեգջանյանի անվան հիմնական դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....6
ԳԼՈՒԽ1
ՈՒՍՈՒՑՉԻ ԽՈՍՔԸ ԵՎ ԴԵՐԸ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿ.....9
ԳԼՈՒԽ2
ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐ,ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ
ԴԱՍԻՆ.....14
ԵԶՐԱԿԱՑՈՒՅԹԻՆՆԵՐ.....22
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեզուն-խոսքը հասարակական-պատմական արդյունք են: Նրանցում արտացոլվում են ժողովրդի պատմությունը, ավանդույթները, սոցիալական հարաբերությունների համակարգը, մշակույթը՝ ամենալայն իմաստով:

Լեզուն և խոսքը ծագել են ու զարգացել մարդու բազմաբնույթ գործունեության ընթացքում՝ դառնալով այդ գործունեության իրականացման գլխավոր գործոնները:

«Խոսքի զարգացումը նրա մշակումը, կատարելագործումը և հարստացումն է այն հաշվով, որ ապահովվի խոսքի ճիշտ, նպատակային ու գեղեցիկ կառուցումը թե՛ բառերի ընտրության, թե՛ քերականական կառուցվածքի և թե՛ առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր բաղադրիչների, բոլոր օրինաչափությունների տեսակետից»:

Արդի ուսուցման հիմնական նպատակն է ոչ միայն հաղորդել որոշակի գիտելիքներ, այլև ձևավորել անհրաժեշտ գիտելիքներն ինքնուրույն ձեռք բերելու և այն կիրառելու կարողություններ:Եթե վաղ տարիքում երեխայի հաղորդակցական հակումները վառ կերպով դրսևորվում են նրա սիրած զբաղմունքի՝ նկարչության, խաղի, ապա կրտսեր դպրոցական տարիքում՝ խոսքի և հաղորդակցման գործունեության մեջ:

Երեխաների խոսքի և հաղորդակցման կարողությունների զարգացումն իրականացվում է գործունեության մեջ, իսկ այդ գործունեության շարժիչուժը հաղորդակցման պահանջն է՝ կարիքը: Շրջապատողների մեջ հաղորդակցման պահանջը և սոցիալական միջավայրը երեխայի խոսքի զարգացման կարևորագույն գործոններն են: Այդ գործընթացում երեխան պասիվորեն չի ընկալում մեծերի խոսքային կաղապարները, այլ ակտիվորեն յուրացնում է խոսքը՝ որպես համամարդկային փորձի մի մաս: Ասվածից ենթադրում ենք, որ մարդու մտածողության զարգացման մակարդակի, զգացմունքների խորության կարևորագույն ցուցանիշներից մեկը նրա խոսքն է: Խոսքային հաղորդակցումը մշտապես ուղեկցելու է մեզ, այն մեր առօրյայի անբաժանելի մի մասն է և մշտապեսբացահայտվելու կարիք ունի:

Հայտնի է, որ բանավոր խոսքը հաղորդակցման հիմնական միջոցներից մեկն է: Իր մտքերը, ապրումները և ցանկությունները համարժեքորեն վերարտադրելու համար երեխան պետք է տիրապետի խոսքի զարգացման հմտություններին,

քերականական կառուցվածքին, կապակցված խոսքին, հնչարտասանական առանձնահատկություններին, հնչերանգի օգտագործման կուլտուրային: Նա պետք է ունենա հարուստ և ակտիվ բառապաշար:

Հայտնի լեզվաբանՄ. Վ. Պլանովը «լեզու» և «խոսք» հասկացությունների բացահայտման նպատակով ներկայացնում է մի ուշագրավ նույնություն.

«Պատկերացրեք մի հաստոց, որից անընդհատ դուրս են գալիս նոր ժամացույցներ: Դրա համար անհրաժեշտ են. առաջին՝ նախապես պատրաստված մասեր, երկրորդ՝ հայտնի կանոնների համապատասխան պատրաստի մասերի հմուտ համակցում: Այդ կանոնները կարող են ինչ-որ տեղ գրված լինել,բայց կարևորը դրանց՝ հավաքող վարպետի գլխում լինելն է»:

Այս համեմատության մեջ ժամացույցի մասերը բառերն են, լեզուն, իսկ պատրաստի ժամացույցը՝ խոսքը:

Խոսքային հաղորդակցման կարևոր և գլխավոր նպատակը խոսքի զարգացումն է:

Մանկավարժամեթոդական գրականության մեջ սահմանազատվում են մարդու խոսքի զարգացման հետևյալ փուլերը.

1.մանկական տարիք (մինչև 1 տարեկան)՝ գեղգեղանք և թոթովանք,

2.մսուրային տարիք(մինչև 3 տարեկան)՝բառի հնչյունային և վանկային կառուցվածքի, նախադասության բառերի միջև գոյություն ունեցող պարզ կապակցությունների տիրապետում (երկխոսությունային և իրադրությունային),

3.նախադպրոցական տարիք (3-ից մինչև 6 տարեկան) մենախոսության և ենթատեքստային խոսքի, պարզ ներքին խոսքի դրսևրում,

4.կրտսեր դպրոցասկան տարիք (7-ից մինչև 10 տարեկան)՝խոսքային ձևերի ըմբռնում (բառի հնչյունային կազմ, բառապաշար,խոսքի քերականական կառուցվածք,), գրավոր և բանավոր խոսքի, նրանց մատչելի նորմերի տիրապետում, մենախոսելու կարողության բուռն զարգացում,

5. միջին դպրոցական՝ դեռահասության տարիք (10-ից մինչև 15 տարեկան)՝ խոսքի գրական նորմերի, ոճի՝ ըստ ամենայնի տիրապետում,անհատական ոճի ձևավորում:

6.ավագ դպրոցական՝ պատանեկության տարիք (15-ից մինչև 17 տարեկան)՝ խոսքի մշակույթի կատարելագործում,լեզվի առանձնահատկությունների տիրապետում, անհատական ոճի ամրապնդում և կատարելագործում:

Մեթոդական այս խնդիրները լուծվում են այն գիտությունների միջոցով, որտեղից մեթոդիկան քաղում է իր համար սկզբունքորեն կարևոր տեղեկատվություններ: Այդ գիտություններից առաջատարը լեզվաբանությունն է, հոգեբանությունը և մանկավարժությունը:

Խոսքի զարգացման մեթոդիկայի կատարելագործման գործընթացում կարևոր է առաջավոր մանկավարժական փորձի ուսումնասիրությունը, վերլուծությունը, կիրառումը և կատարելագործումը:

Այս ամենից բացի, կարևորէ նաև ուսուցչի և սովորողների, ծնողների, նրանց օրինական ներկայացուցիչների համագործակցությունը, սովորողների հաղորդակցումը, նրանց գրագետ խոսքը ձևավորելու համար: Հարկավոր է համագործակցել սովորողների դաստիարակությունը ճիշտ կազմակերպելու համար, քանի որ ավելի հեշտ է դաստիարակել, քան թե վերադաստիարակել: Վերադաստիարակությունը սովորողների մեջ ոչ ճիշտ կամ ոչ լրիվ ձևավորված բարոյականային հատկանիշների, բնավորության գծերի, սովորույթների, արարքների, վարքի բարեփոխումն ու կատարելագործումն է՝ նախապես ճիշտ ընտրված մեթոդների ու հնարների միջոցով:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել խոսքային հաղորդակցման էությունն ու դրա կազմակերպման արդյունավետ եղանակները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտական և ուսումնական գրականությունը,
2. բացահայտել խոսքային հաղորդակցմանը նպաստող ուսուցման մեթոդները,
3. անդրադառնալ խոսքային հաղորդակցման իրականացմանը ռուսաց լեզվի և գրականության դասաժամերին :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ինչպես ցույց է տվել մասնագիտական գրականության վերլուծությունը՝ հաղորդակցումը ներառում է այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝

1. Շրջապատի հետ կապի մեջ մտնելու ցանկություն՝կարիքը, և շփման կանոնների իմացությունը («ես ուզում եմ»),

2.Շրջապատի հետ հաղորդակցվելու կանոնների իմացությունը («ես գիտեմ»), Հաղորդակցումը կազմակերպելու ունակությունը («ես կարող եմ»): Վերոնշյալ բաղադրիչների ձևավորման համար էլ ուսուցչի առջև դրված են երեխաներին հաղորդակցվել սովորեցնելու, միմյանց հետ համագործակցելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ շփման ունակությունները և կարողությունները զարգացնելու խնդիրներ: Ուսուցչի խոսքի մշակույթի ձևավորմանն անդրադարձել են դեռևս Հին Հունաստանում և Հին Հռոմում: Կան բազմաթիվ աշխատություններ, որոնք նվիրված են ուսուցչի խոսքի մշակույթի ձևավորմանը և զարգացմանը: Ն. Գ. Չերնիշևսկին սահմանել է, որ ուսուցչի խոսքը դաստիարակության կարևոր միջոցներից մեկն է: Նրա կարծիքով ուսուցչի խոսքը երեխաների համար պետք է լինի պարզ և հասկանալի, բայց ոչ պարզեցված: Հայ մանկավարժությունը ևս անմասն չի մնացել ուսուցչի խոսքի մշակույթի ձևավորման հիմնախնդրի ուսումնասիրման գործում:Հայ մեծանուն մանկավարժ Մ. Մամուրյանը կարևորել է ուսուցչի լեզուն և ոճը: Նա պնդում է, որ խոսքի հստակությունն ու որոշակիությունն արտացոլում են ուսուցչի առարկայական մասնագիտական պատրաստության և ուսուցանելու արվեստի հմտությունը, իսկ անորոշ, աղքատիկ խոսքը, արտահայտություններն ընդհակառակը՝ նրա գիտելիքների խառնաշփոթությունը: Կարևոր հանգամանք է նաև լեզվի քերականական կանոնների պահպանման ճշտությունը, առոգանությունը, որովհետև աշակերտների լեզվի մշակման, ընդօրինակման ամենօրյա և գլխավոր աղբյուրը ուսուցիչներն են իրենց լեզվական արտահայտություններով: Մամուրյանը նշում էր, որ ուսուցիչը պետք է ունենա հարուստ բառապաշար և տեղին ու նպատակային գործածի հարմար բառերը, որոնք արտահայտչական որևէ դժվարություն չկրեն: Իսկ խոսքի մշակման, բառապաշարի հարստացման աղբյուրը գրական հեղինակների աշխատություններն են, դրանց ընթերցումը: Բայց բառապաշարի հարստությունը չպետք է ծանրաբեռնի ուսուցչի խոսքն անտեղի, չափից ավելի «հորդառատ»

բառերով, այլապես բառերի տարափի տակ կմթագնի ասելիքը: «Երբ մտածողությունը ճշտգրտության կողմե թերի է, մարդ պետք եղածնավելի խոսելու կստիպի»,– նկատում է Մամուրյանը: Մամուրյանի տեսակետն այսօր էլ արդիական է, և այդ ուղղությամբ նպատակաուղղված աշխատանք է իրականացվում: Վ. Ա. Սուխոմլինսկին կարևորում էր բառի արժեքը և հաղորդակցման ժամանակ մեծ կարևորություն էր տալիս: Նա մասնավորապես մատնանշել է, որ բառը սրտին ամենաբարակ հպումն է, խոսքը կարող է սպանել կամ վերակենդանացնել, վիրավորել, սերմանել շփոթություն ու անհույսություն: Փարատե՛ք կասկածները և ընկղմե՛ք հուսահատության մեջ, ժպիտ ստեղծե՛ք և անհավատություն սերմանե՛ք:

Կարելի է հավելել, որ նրանք ամենանուրբ էակներն են, և կարող է նրանց հոգեբանական լուրջ վնաս հասցնել անգամ ոչ տեղին արտահայտված խոսքը, հետևաբար յուրաքանչյուր բառ արտասանելիս պիտի մտածված գործածել: Քանի որ գրագետ խոսքի բաղադրիչների մեջ կարևոր է լեզվի քերականական կանոններ ի իմացությունը, ապա այն մանկավարժին տալիս է մտքերը ճիշտ արտահայտելու հնարավորություն, խոսքը դարձնում է իմաստավորված՝ նպաստելով սովորողների կողմից ուսումնական նյութի ամբողջական ընկալմանը, ըմբռնմանն ու մտապահմանը: Կարևորելով նշվածը՝ խոսքը չպետք է լինի խրթին, երեխաների համար անհասկանալի, անմեկնելի: Բացի այդ՝ կարևոր է խոսքի արտահայտչականությունը՝ բովանդակությունը, վստահությունը, համոզիչ լինելը, պատկերայնությունը, առոգանությունը, սահունությունը և այլն: Ուստի ուսուցիչը պետք է տիրապետի.

1. գրական,գեղարվեստական, ընկերական շփմանը,

2. հետաքրքիր, ընկերական,սիրով շփմանը,

3. ստեղծագործական, երևակայական շփմանը,

4. ստեղծագործական մտածողությանը,

5. կազմակերպչական կարողությանը,

6. հումորի զգացում ունենա,

7. լինի վճռական,հետևի կարգապահությանը և այլն:

Ժամանակակից մանկավարժի մասնագիտական կարողությունների կարևորագույն տարրը բանավոր խոսքն է, որը ծառայում է որպես մանկավարժական գործունեության միջոց:

Ուսուցիչը, անշուշտ, պետք է գերազանց խոսք ունենա: Ի վերջո, երեխան պետք է սովորի ճիշտ խոսել, արտահայտել իր մտքերը և հետագայում սովորի գրել իրենց գրավոր ներկայացման համար:

Այսպիսով, արդյունավետ կազմակերպված մանկավարժական հաղորդակցման գործընթացը հնարավորություն է տալիս մանկավարժական գործունեության ժամանակ ապահովելու իրական հոգեբանական շփում,որը պետք է առաջանա մանկավարժի և երեխաների միջև՝ նրանց վերածելով հաղորդակցման սուբյեկտների, օգնելով հաղթահարե լտարաբնույթ հոգեբանական խոչընդոտները, որոնք առաջանում են փոխգործունեության գործընթացում, երեխաներին ուղղորդել համագործակցության՝ դարձնելով մանկավարժական ստեղծագործության սուբյեկտների: Այս դեպքում մանկավարժական հաղորդակցումը բնութագրում է մանկավարժական գործունեության ընդհանուր սոցիալ–մանկավարժական կառուցվածքը: Այն մանկավարժական գործունեություն է ներմուծվում որպես ներազդման գործիք և սովորական պայմաններն ու հաղորդակցման գործառույթներն այստեղ ստանում են հավելյալ ծանրաբեռնվածություն, քանի որ համամարդկային ասպեկտներից վերափոխվում են մասնագիտական–ստեղծագործական բաղադրիչի:

ԳԼՈՒԽ1

ՈՒՍՈՒՑՉԻ ԽՈՍՔԸ ԵՎ ԴԵՐԸ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Բոլոր ժամանակներում էլ խոսքը զորավոր ազդեցություն է ունեցել անհատների և հանրության վրա: Ցանկացած կիրթ մարդ, մտավորական և հատկապես ուսուցիչ պարտավոր է բարձր մակարդակով տիրապետել մայրենի լեզվին, քանի որ հենց ինքն է հասարակությանն առաջ մղողը, նրան վեհ գաղափարներով զինողն ու դաստիարակողը, իսկ ռուսաց լեզվի ուսուցիչը մայրենի լեզվի հիման վրա է սովորեցնում ռուսաց լեզուն:

Ուսուցիչն, ընդունելով իրեն վստահված ամենահզոր զենքը՝ լեզուն, պետք է կարողանա զգուշությամբ և վարպետորեն կիրառել այն՝ անընդհատ կատարելագործելով իր մասնագիտական կարողությունները՝ կիրթ, գեղեցիկ և հետաքրքիր խոսք կառուցելու համար: Անառարկելի փաստ է, որ աշակերտին ոգևորող լավագույն օրինակը ուսուցչի խոսքն է, ուստի ուսուցիչը պետք է խորությամբ զգա և ընկալի լեզվի յուրաքանչյուր հնչյուն, բառ, արտահայտություն՝ վերջիններից իմաստային բոլոր դրսևորումներով, այսինքն՝ ունենա լեզվազգացողության բարձր մակարդակ: Ուսուցիչը պետք է ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրի դասավանդվող նյութը , որպեսզի աշակերտների բանավոր խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման աշխատանքներն իրականացնի ճիշտ մեթոդաբանությամբ:

Երեխաների խոսքի մշակույթի ձևավորման ելակետը հենց մանկավարժի խոսքն է: Մ.Ա Ռիբնիկովան շեշտում է. «Ինքը՝ ուսուցիչը, նրա խոսքի ձևը, արտահայտիչ խոսքը, պատմությունը, պոեզիայի ընթերցանությունը՝ այս ամենը մշտական օրինակ է ուսանողների համար»: Ուստի օրինակելի խոսքի նկատմամբ ուշադրությունը, որը պետք է լինի ուսուցչի խոսքը, կօգնի ձևավորել երեխայի լեզվական ճաշակը, քննադատական վերաբերմունքը սեփական բանավոր խոսքի նկատմամբ, այն բարելավելու անհրաժեշտությունը և կօգնի նրան գիտակցել խոսքի վարքագծի հիմնական կանոնները: Նույնիսկ Յա. Ա. Կոմենիուսը կարծում էր, որ ուսուցիչը պետք է տիրապետի բառին այնքան, որ այն ապահովի ուսանողների լիարժեք ուշադրությունը: Ուսուցչի

լեզուն, նրա կարծիքով, պետք է լինի ճշգրիտ և պարզ, արտահայտիչ, վառ և գրավիչ ուսանողների համար:

Ուսուցչի լեզվամտածողության զարգացմանը մեծապես նպաստում են ճարտասանական գիտելիքներն ու դրանք գործնականում կիրառելու կարողությունը: Ուսուցչի արտահայտիչ պատկերավոր խոսքն անհամեմատ ազդեցիկ է, ուժեղ. այն հարստացնում է խոսքի բովանդակությունը,զորացնում է արդյունավետությունը: Ոչ միայն ազդում է աշակերտի մտքի վրա, այլև արթնացնում է նորանոր զգացումներ, վառում է երևակայությունը: Դրանով նա իր խոսքը դասարանի համար դարձնում է ավելի հետաքրքիր, իսկ հաղորդվող միտքն ավելի ընկալելը: Հնչերանգը բանավոր խոսքի կարևոր տարրերից է և պայմանավորվում է մի շարք գործոններով՝ խոսողի անհատականությունը, հաղորդման տեսակը, իրադրությունը, խոսողի հոգեվիճակը, խոսքի կառուցվածքը դասարանի սոցիալ- հոգեբանական կազմը և այլն:

Աշակերտների կողմից նյութի ճիշտ ընկալման գործընթացը կախված է ուսուցչի խոսքի կատարելությունից, ում համար արտասանության հստակությունը մասնագիտական անհրաժեշտությունէ, որը նպաստում է սովորողների կողմից ուսուցչի խոսքի ճիշտ ընկալմանը: Իր աշխատանքի ընթացքում ուսուցիչը պետք է դասարանում իրականացնի որոշակի պահանջներ, որոնք հակիրճ կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

1. Հետևեք ձեր խոսքին՝ խուսափելով գրական լեզվի նորմերի խախտումներից. ուսուցչի խոսքը մոդել է սովորողների համար.
2. Ուշադիր վերահսկել սովորողների խոսքը, հասնելով դրա տրամաբանությանը, համահունչությանը, գրական ճիշտությանը.
3. Բացատրեք ուսումնական նյութի բացատրության մեջ հանդիպող բոլոր նոր բառերի իմաստը, արտասանությունը և ուղղագրությունը:

Կրթական աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի կրթական մշակույթի մակարդակից: Ցանկացած առարկայի ուսուցչի համար հատկապես կարևոր է համահունչ ելույթ ունենալը, քանի որ ուսումնական նյութը բացատրելու արդյունավետ մեթոդներից մեկը ուսուցչի համահունչ պատմությունն է: Ճիշտ և մաքուր խոսքը խոսքի մշակույթի միայն առաջին փուլն է: Ուսուցչի համար

խոսքի միայն այս պահանջների պահպանումը բավարար չէ: Նրա խոսքը պետք է լինի նաև ոճական առումով համապատասխան, համապատասխանի հայտարարության բովանդակությանը, պայմաններին և նպատակներին:

Ուսուցիչը պետք է պահպանի ուղղախոսության բոլոր կանոնները. ուղղախոսական շեղումներ առաջանում են բարբառների և օտար բառերի ազդեցությամբ, ինչպես նաև ժողովրդական ստուգաբանության հետևանքով:

Դասի ժամանակ ուսուցիչը պետք է մի կողմ թողնի առօրյա խոսակցական ոճը և այն կիրառի խիստ անհրաժեշտության դեպքում, օրինակ գրականության նյութը մատուցելիս:

Ուսուցիչը պետք է սահմանի որոշակի դիմելաձև, ցանկալի է աշակերտին դիմելիս հնչեցնել նրա անունը լիարժեքորեն, առանց փաղաքշական երանգների և կրճատման: Ուսուցիչն իր սերը պետք է արտահայտի զուսպ բառապաշարով, սիրալիր, հոգատար հայացքն ու վերաբերմունքը ավելի գերադասելի են:

Ուսուցիչը պետք է մեծ ուշադրություն դարձնի ձայնի տեմբրին, հնչերանգը անչափ կարևոր դեր ունի դասի մատուցման ժամանակ: Հնչերանգի փոփոխության ժամանակ կարևոր են նաև տրամաբանական դադարները:

Կարևորում ենք նաև հանդիսավոր ելույթին վայել ուսուցչի ճարտասանական խոսքը,այն կարևոր միջոց ենք համարում դասի ժամանակ սովորողների ուշադրությունը գրավելու համար: Ուստի ուսուցչի խոսքը պետք է համեմված լինի հանդիսավորությամբ և ճիշտ ընտրված հնչերանգով:

Ուսուցիչը պետք է խուսափի դժվար ըմբռների բառերի կիրառումից, կարելի է ընտրել դրանց մատչելի տարբերակները. այս հանգամանքը կարևոր ենք համարում նամանավանդ ռուսաց լեզվի դասավանդման ժամանակ: Տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով հարկավոր է դասին համընթաց, զուգահեռաբար հարստացնել սովորողների բառապաշարը, բայց ոչ դասի նյութը մատուցելիս, եթե իհարկե խոսքը չի վերաբերում բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցմանն ու գեղարվեստական գրականության նյութի մատուցմանը:

Անառարկելի փաստ է, որ ուսուցչի խոսքը պետք է լինի մատչելի, որքան մատչելի, այնքան դասը հասկանալի, մատչելի, բայց ոչ պարզունակ:Ուսուցչի խոսքը պետք է համեմված լինի մակդիրներով, համեմատություններով,

բառակրկնություններով, փոխաբերություններով, շրջասույթներով, բառերի ձևաիմաստային խմբերից ընտրված ճիշտ օրինակներով:

Դասի սկիզբը շատ կարևոր են հետագայում հաջողության հասնելու, սովորողների ուշադրությունը գրավելու, դասի նպատակներին հասնելու, դասի խնդիրները լուծելու, դասը հաջողված համարելու համար: Ուստի ուսուցիչը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի դասի սկզբի վրա, որի ժամանակ վճռական դեր ունի ուսուցչի խոսքը: Ուսուցիչը պետք է խուսափի օտարաբանություններից, անհարկի բարբառայնությունից, գռեհկաբանությունից:

Ռուսաց լեզուն վերջին երկու տասնամյակների ընթացքում ենթարկվել է բազմաթիվ ոչ լավագույն փոփոխություններին: Մեր օրերի արդի խնդիրը խոսքի ընդհանուր մշակույթի ցածր մակարդակն է, բառարանի աղքատությունը, միտք արտահայտելու անկարողությունը:

Ներկայումս հայտնի է «Խոսքը մարդու այցեքարտն է» ասացվածքը: Թե որքան գրագետ է մարդը արտահայտվում, կախված է նրա հաջողություններից ոչ միայն առօրյա հաղորդակցության, այլեւ մասնագիտական գործունեության մեջ: Այս հայտարարությունը հատկապես արդիական է տարրական դասարանների երեխաների հետ աշխատող ուսուցչի խոսքի առնչությամբ:

Յուրաքանչյուր տարիքային խմբի երեխաներն իրենց ուսուցչի հետ շփվում են տարբեր աշխատանքներում՝ կենցաղային և աշխատանքային, կրթական: Ուսուցիչը երեխաների հետ խաղեր է կազմակերպում, բոլոր դասարաններում զրուցում նրանց հետ, երեխաներին ծանոթացնում արվեստի գործերի հեղինակների խոսքին՝ կարդալիս և այլն: Հետեւաբար, խոսքի միջավայրի զարգացող ներուժն ամբողջությամբ կախված է ուսուցչի խոսքի որակից: Ուսուցչի համար օրինակելի խոսքի վարպետությունը նրա մասնագիտական պատրաստվածության ցուցանիշն է: Նա պարտավոր է իր մեջ զարգացնել խոսքի այդ հմտությունների կատարյալ տիրապետումը, որոնք հետո կփոխանցի իր երեխաներին: Հետևաբար, դպրոցական հաստատության մանկավարժական գործընթացում առաջնահերթ նշանակություն ունի ուսուցչիի հաղորդակցական և խոսքի հմտությունների բարելավման մտահոգությունը: Տարրական դպրոցական տարիքը երեխայի խոսքի զարգացման զգայուն շրջանն է, հետևաբար, տարրական դպրոցի ուսուցչի առաջատար գործունեություններից մեկը

բանավոր խոսքի և խոսքի հաղորդակցման հմտությունների ձևավորումն է՝ հիմնված մայրենի գրական լեզվի իմացության վրա: Ուսումնասիրություններում Տիհեևա, Ֆ.Ա. Սոխինը նշվում է, որ երեխաները սովորում են խոսել լսողության և ընդօրինակելու ունակության միջոցով: Տարրական դպրոցի սովորողներն ասում են այն, ինչ լսում են, քանի որ խոսքի ներքին մեխանիզմները երեխայի մոտ ձևավորվում են միայն մեծահասակների համակարգված կազմակերպված խոսքի ազդեցության ներքո: Երեխաների մայրենի լեզվին տիրապետելու հիմնական մեխանիզմներից մեկը իմիտացիան է: ՄՄ. Ալեքսեևան նշում է, որ, ընդօրինակելով մեծերին, երեխան ընդունում է «ոչ միայն արտասանության, բառի օգտագործման, արտահայտությունների կառուցման բոլոր նրբությունները, այլև այն թերություններն ու սխալները, որոնք տեղի են ունենում նրանց խոսքում»: Այդ իսկ պատճառով պետք է բարձր պահանջներ դրվեն տարրական դպրոցի ուսուցիչների խոսքի նկատմամբ, իսկ ուսուցչի խոսքի մշակույթի բարելավման խնդիրը դիտարկվում է դպրոցական կրթության որակի բարձրացման համատեքստում:

ԳԼՈՒԽ2

ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐ.ԽՈՍՔԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԻՆ

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Համենայն դեպս, բիզնես ընկերությունները հասկացել են, որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին ու ազդել նրա վրա: Պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլևս պարապ չեն: Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:

Ուսուցչի կարևորագույն գործառույթներից է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությունը: Ուսուցման այս կամ այն մեթոդի ընտրությունը,պայմանավորված է տվյալ առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներով և ուսուցման նպատակներով, մեր դեպքում մենք կհիմնվենք ռուսաց լեզվի վրա:

Մեթոդն ինքնին ընդամենը գործիք է՝ դասի նպատակին հասնելու համար. կարևոր է ճիշտ ընտրել և օգտագործել այդ գործիք ըուսուցման նախապես

պլանավորած նպատակներին հասնելու համար:

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել:

Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի մեթոդներ, եղանակներ, ձևեր, հնարներ: Կան մի շարք գործոններ, որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա.

1. ուսուցման նպատակները, խնդիրները, բովանդակությունը,
2. ոսուցման նյութի քանակը և բարդությունը,
3. սովորողների պատրաստվածության մակարդակը,

4. ուսուցման կազմակերպման պայմանները,
5. սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները,
6. ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

Ռուսաց լեզվի, գրականության դասերին առավել հաճախ կիրառվող մեթոդներից են խոսքային մեթոդները. գեղարվեստական ստեղծագործությունների անգիր անելը, զրույցները, բանավեճերը, ազատ շարադրանքները և այլն: Խոսքային բոլոր մեթոդների ժամանակ, իհարկե, կարելի է նաև ինչ-որ տեղ նաև պարտադիր է օգտագործել դիտողական պարագաներ:

Խոսքային մեթոդներն են.

1. Զրույց
2. Դպրոցական դասախոսություն
3. Բացատրում
4. Աշխատանք դասագրքով
5. Պատմել
6. Բանավեճ

Խոսքային մեթոդների օգնությամբ լուծվում են սովորողներին համակարգված գիտելիքներ հաղորդելու, նրանց մոտ խոսքի կուլտուրայի ձևավորման խնդիրները: Նրա արդյունավետության կարևոր պայմաններ են խոսքի մատչելիությունը, արտահայտչականությունը, հստակ տրամաբանական կառուցվածքը, պատկերավորությունն ու ապացուցականությունը:

Զրույց

Մեթոդի էությունն այն է, որ սովորողները պատասխանում են նախօրոք կազմված հարցերին: Այս մեթոդը կիրառվում է նոր նյութի հաղորդման, ամրապնդման, ստուգման ժամանակ: Նոր դասանյութի ավելի արդյունավետ անցկացման համար սովորողներին նախապես հանձնարարվում է ուսումնասիրել նյութը, որը վերլուծվելու է, բացատրվելու: Ուսուցիչը հատուկ կազմակերպված հարցերի միջոցով դրդում է աշակերտին դատողություններ ու վերլուծություններ կատարել փաստերի և երևույթների մասին, որի արդյունքում ինքնուրույն հասնում է համապատասխան տեսական եզրակացությունների ու ընդհանրացումների:Զրույցի մեթոդի հիմնական գործառնությունը մոտիվացիան է:

Դպրոցական դասախոսություն

Սա ուսուցման մի մեթոդ է, որի դեպքում ուսուցիչը բավական երկարժամանակ բանավոր շարադրում է նկատելի ծավալով ուսումնական նյութ, օգտագործելով սովորողների իմացական գործունեության ակտիվացման որոշակի հնարներ: Այս մեթոդը ենթադրում է դասախոսության պլանի հստակորեն կազմում, հարցերի տրամաբանական կապերի պահպանում, դիտազննական պարագաների, ուսուցման տեխնիկական միջոցների ճիշտ ընտրություն և այլն:

Այս մեթոդի գլխավոր գործառույթը համակարգված և խոր տեսական գիտելիքներ հաղորդելն է : Այն կիրառելի է հանրակրթական դպրոցի բարձր դասարաններում:

Պատմել

Այս մեթոդը կիրառվում է ուսուցման բոլոր փուլերում: Պատմելը սկսվում է ներածությունով և ավարտվում ամփոփումով: Շարադրվում կամ պատմվում է ուսումնական նյութի բովանդակությունը՝ խստագույնս պահպանելով սիստեմատիկության և հաջորդականության սկզբունքը: Պատմելու ընթացքում վարպետորեն առանձնացվում է նյութի գլխավոր տարրերը: Գիտելիքները հիմնավորվում է օրինակներով, գիտական փաստերով, համապատասխան իլյուստրացիաներով և դեմոնստրացիաներով: Այս մեթոդի կիրառման ժամանակ գործադրվում է մի շարք հնարներ, օրինակ՝ «համեմատության», «համադրության», «սովորողների ուշադրության ակտիվացման» և այլն: Այս մեթոդը հիմնականում կիրառվում է դպրոցական ուսուցման ընթացքում:

Բացատրում

Բացատրումը ուսուցման այն մեթոդն է, երբ ուսուցիչը ոչ այնքան նոր նյութ է հաղորդում, որքան վերլուծում է նոր ուսումնական նյութը, պարզաբանում և ապացուցում է այս կամ այն դրույթը: Օրինակ, բացատրում է որևէ ուղղագրական կանոն:

Աշխատանք դասագրքով

Այս մեթոդի հիմնական նպատակը սովորողներին ուսումնական գրականության հետ աշխատել սովորեցնելն է: Լայն առումով այն իր մեջ ներառում է անհրաժեշտ տեղեկատվության որոնման, մշակման և ընտրողաբար յուրացման կարողությունների ձևավորումը:

Բանավեճ

Այս մեթոդը կիրառվում է սովորողների իմացական հետաքրքրությունները ակտիվացնելու, կարծիքները, համոզմունքները, տեսակետները հայտնելու, հարցապնդումներ անելու, ճշմարտությունն ի հայտ բերելու համար: Բանավեճի միջոցով արժևորվում, գնահատվում են սովորողների գիտելիքները, կարողություններն ու հմտությունների չափը, ծավալը, զարգացման աստիճանը: Առանց կայուն և խորը գիտելիքների դժվար է ակտիվորեն մասնակցել բանավեճին, համոզել ընդդիմախոսներին: Բանավեճը սովորողներից պահանջում է ճիշտ ձևակերպել իրենց մտքերը, համբերատար լսել ընկերների պատասխանները, կարծիքները, հարցապնդումները, հակադրվելու դեպքում բացառել վիրավորանքը: Բանավեճը կարող է լինել ազատ, երբ այն զարգանում է ազատ, և ղեկավարվող, երբ այն զարգանում է որոշակի ուղղությամբ:

Կան նաև մի շարք նոր մեթոդներ, որոնք հիանալի ընտրություն կարող են լինել խոսքային ուսուցման ժամանակ: Անդրադառնանք դրանցից մի քանիսին: Հետազոտության ընթացքում մենք կիրառել ենք դրանք:

Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի ընթացքին:

Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

Խորհրդավորություն

Երեխաները սիրում են գաղտնիքներ: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը:

Հետևաբար՝ երբեմն կարելի է դասը սկսել հետևյալ նախադասությամբ.

-Մեր այսօրվա դասի թեման կորել է, եկեք հարցերի միջոցով պարզեք մեր այսօրվա դասի թեմայի տեղը:

Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են երեխաների ուշադրությունը:

Հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է:

Գուշակություն

Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը:

Մեջբերումներ

Բավականին արդյունավետ է դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝այդ ձևով տալով նախագիտելիք,ստեղծելով պրոբլեմային իրավիճակ,աշխատանքային տրամադրություն:

Մտագրոհ

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն հաղորդակցական մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքերտվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն:

Ինձնից առաջ հարցրու երեք հոգու

Այս հնարի իմաստն այն է, որ աշակերտները սովորեն նաև միմյանցից: Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին հարցերով դիմել իրենց դասընկերներին և իրեն դիմել միայն այն բանից հետո, երբ երեք աշակերտների դիմելուց հետո չեն ստացել հարցի

պատասխանը:

Դասիզեկուցող

Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում: Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցողը: Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին:

Գիտեմ, ուզում եմ իմանալ, սովորեցի (ԳՈՒՍ)

Դասը սկսելու շատ հայտնի հնար է նաև ԳՈՒՍ-ը: Դասասկզբում ուսուցիչը գծում է Մ-աձև աղյուսակ, որի ձախ սյունակում գրում է՝ գիտեմ, կենտրոնում՝ ուզում եմ իմանալ, աջ սյունակում՝ սովորեցի բառերը: Դասի թեման հայտնելուց հետո ուսուցիչը դիմում է աշակերտներին հետևյալ հարցով. ի՞նչ գիտեք այս թեմայի, հասկացության մասին: Ապա լրացվում է գիտեմ սյունակը: Հաջորդիվ աշակերտներին հարցնում է՝ ի՞նչ եք ուզում իմանալ այդ թեմայի մասին: Եվ լրացնում է ուզում եմ իմանալ սյունակը: Դասի վերջում լրացվում է սովորեցի սյունակը:

Դասի զեկուցող

Այս պարզագույն հնարը շատ կարևոր դեր կարող է ունենալ սովորողներին դասապրոցեսում ընդգրկելու գործում: Ուսուցիչն աշակերտներից մեկին նշանակում է դասի զեկուցող: Վերջինս դասի ավարտից 3-5 րոպե առաջ ամբողջ դասարանին ամփոփ ներկայացնում է, թե ինչի մասին էր դասը, ինչ արեցին, ինչ կարևոր բաներ սովորեցին:

Կան նաև մի շարք նոր մեթոդներ, որոնք հիանալի ընտրություն կարող են լինել խոսքային ուսուցման ժամանակ: Անդրադառնանք դրանցից մի քանիսին: Հետազոտության ընթացքում մենք կիրառել ենք դրանք:

Հին պայուսակ

Այս մեթոդը հնարավորություն է տալիս խորհրդանշական պայուսակի պարունակության միջոցով ներկայացնելու սեփական անձը: Մասնակիցը պատկերացնում է, թե ունի մի հին պայուսակ, որի մեջ պետք է դնի երեք իր՝ մեկն իր անցյալը, մեկն իր ներկան և վերջինն իր ապագան բնորոշող: Այնուհետև ելույթի ժամանակ մասնակիցը պետք է հիմնավորի՝ ինչու է ընտրել հատկապես այդ երեք առարկաները: Այս հնարն ուղղված է սովորողի բանավոր խոսքը կազմակերպելուն և

զարգացնելուն: Այն սովորողի լեզվական, մտածական և տրամաբանական ունակությունները միավորող և բացահայտող հրաշալի միջոց է: Նախ սովորողը պետք է ընտրի որոշակի խորհրդավորություն և նշանակություն ունեցող իրեր, այնուհետև կարողանա դրանք կապել իր անցյալի, ներկայի և ապագայի հետ: Իսկ լսարանին համոզելու համար պետք է կարողանա համապատասխան բառեր և արտահայտություններ ընտրել, իսկ ամենակարևորը՝ միտքը պետք է լինի տրամաբանված, խոսքը՝ սահուն և գեղեցիկ:

Վեց բառից պատմվածք՝ ըստ Հեմինգուեյի

Յուրաքանչյուր մասնակից մի պահ իրեն պատկերացնում է որպես հայտնի գրող և օգտագործելով ընդամենը վեց բառ՝ փորձում է ներկայացնել իր բնավորության էական կողմերը: Այս հնարը վերցված է Հեմինգուեյի հայտնի վեցբառանոց պատմվածքից, որը ժամանակին հատուկ մրցանակի արժանացավ: Պատմվածքն ունի հետևյալ բովանդակությունը. «Վաճառվում են նորածնի կոշիկներ.հագած չեն»:Այս մեթոդը հրաշալիորեն կիրառվում է գրականության դասերին, սակայն կարելի է կիրառել նաև հայոց լեզվի որոշակի թեմաներ ուսումնասիրելիս, օրինակ՝դարձվածաբանությանն անդրադառնալիս կարելի է հանձնարարել կազմել վեց բառից կազմված ամփոփ միտք՝ կիրառելով առնվազն մեկ դարձվածք:

Pie (կարկանդակ) մեթոդը

Մասնակիցները կազմում են շրջան, որի կենտրոնում գրված է թեման կամ հետազոտվող հարցը: Ուսուցիչը շրջանը բաժանում է 4 կամ 6 մասի՝ըստ ենթահարցերի: Մասնակիցներին հանձնարարվում է գաղափարներ առաջ քաշել յուրաքանչյուր ենթահարցի վերաբերյալ և դրանք գրել: Վարժության վերջում դիագրամը ներկայացնում է այն բոլոր գաղափարները/մտքերը, որոնք էլ կազմում են ընդհանուր թեման:

Այս և նմանատիպ մեթոդներն են զարգացնում սովորողների խոսքը,ապահովում նրանց հաղորդակցումը և համագործակցությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ուսուցչի խոսքը վճռական դեր ունի սովորողների խոսքային հաղորդակցման ձևավորման գործում:

2. Խոսքային հաղորդակցումը հարկավոր է իրականացնել ճիշտ ընտրելով խոսքային մեթոդներըև դրանք գրագետ կիրառելով:

3.Ռուսաց լեզվի և գրականության դասավանդման և խոսքային հաղորդակցման ընթացքում կարևոր և գլխավոր նպատակը խոսքի զարգացումն է:

4.Երեխաների խոսքային կարողությունների ձևավորումը պետք է կապել նրանց խոսքի որոշակի ոճի զարգացման հետ՝խոսակցական,գիտական,գեղարվեստական և այլն:

5.Խոսքի օրինակելի նմուշներ երեխաները նախ ստանում են ընտանիքում՝ծնողներից,հարազատներից,ապա դպրոցում՝ուսուցիչներից և,հատկապես,այն նյութերից , գեղարվեստական ստեղծագործություններից, որոնք նրանք կարդում են և պատմում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ

Աբրահամյան Ս. Գ., Աշակերտի խոսքի զարգացումը,Ե.,Լույս,1973,
Առաքելյան Ն., էյրամջյանց Ա., Սամուելյան Ս., Ռուսաց լեզու,մաս 1 Երևան,2020,
Ամիրջանյան Յու. Ա., Ա. Ս. Սահակյան, Մանկավարժություն, Երևան , 2005,ՌաֆայելյանՆ.ԳրձեյանՌ.,Տեր-Առաքելյան Ռ,Ռուսաց լեզվի դասագիրք,9,
Շավարշյան Ա.Մ.,գիրք Բ,հայպետուսմանկ հրատ,Եր.,1961թ.,
Бабаян Т. А., Егиазарян М. А.,Лалаянц С. Г., Русскийязык, учебникдля5-гоклассаосновной школы, Ереван, 2014,
ЗвегинцевВ.А.,История языкознания XIXXX веков вочерках и извлечениях,частьI,1960,
Энциклопедический словарь юного филолога,Сост.М.А.Азров,М.,1984,
Лельчицкий И.Д. Идеал учителя как научное понятие //Педагогика. – 2005. – №1, март, Чернышевский Н. Г., Избранные педагогические сочинения./Подредакций А. Ф.
Составитель А. В. Плеханов,М.,Педагогика, 1983,
Сухомлинский В. А. Сердцеотдаюдетям.Киев:Изд–во«Радяньскашкола»,1987,293с.
Фалей М. В., Педагогическоеобщение: учебноепособие/М. В. Фалей.–Южно–Сахалинск: изд–во СахГУ, 2014,
Առարկայական չափորոշիչներ և ծրագրեր